ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՊՐՈՖԵՍՈՐԻ ԵՎ ԴՈՑԵՆՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն ընթացակարգը սահմանում է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Հիմնադրամ) գիտամանկավարժական կադրերին հիմնադրամի Գիտական խորհրդի որոշմամբ պրոֆեսորի և դոցենտի կոչումներ շնորհելու կարգը:

1.2. Սույն ընթացակարգի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետություն գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգը հաստատելու մասին» N 615 որոշումը, ՀՀ գիտական աստիճանաշնորհման անվանացանկը, Հիմնադրամի կանոնադրությունը և այլ իրավական փաստաթղթեր:

2. ՊՐՈՖԵՍՈՐԻ/ԴՈՑԵՆՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ

2.1. Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների շնորհման համար Հիմնադրամի Գիտական խորհրդին դիմող հավակնորդ կարող են լինել այն անձինք, ովքեր համապատասխանում են «ՀՀ Գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի կոչումներ շնորհելու կարգ»-ում ամրագրված 2-րդ և 3-րդ կետերի դրույթներին:

2.2. Հիմնադրամում պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների շնորհման համար հավակնորդը ուսումնական տարվա ընթացքում Հիմնադրամի ռեկտորին դիմում է ներկայացնում «ՀՀ Գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի կոչումներ շնորհելու կարգ»-ում ամրագրված 4-րդ կետի 7-րդ ենթակետին համապատասխան:

Ռեկտորին ուղղված դիմումին կցվում են.

«ՀՀ Գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ կետում ամրագրված Գիտական կոչում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը (Ցանկ 1)-ը, անձնական թերթիկ՝ 3 լուսանկարով՝ 3x4 չափի, ինքնակենսագրություն (CV):

2.3. Ռեկտորի կողմից դիմումը մակագրվում է Գիտական քարտուղարին, ով համապատասխան ամբիոն է ներկայացնում հավակնորդի դիմումը և 10-օրյա ժամկետում ամբիոնից ստանում է ամբիոնի նիստի արձանագրությունը, որով երաշխավորվում է, որ հավակնորդի տվյալները համապատասխանում են «ՀՀ Գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի կոչումներ շնորհելու կարգ»-ի 2-րդ և 3-րդ կետերում ամրագրված դրույթների պահանջներին:

Գիտական քարտուղարը վերոգրյալ փաստաթղթերի փաթեթը ներկայացնում է Գիտական խորհրդին:

2.4. Հիմնադրամի Գիտական խորհրդի որոշմամբ տվյալ անձին պրոֆեսորի/ դոցենտի Գիտական կոչում շնորհելուց հետո Հիմնադրամի Գիտական քարտուղարի կողմից «ՀՀ Գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի կոչումներ շնորհելու կարգ»-ում ամրագրված 5-րդ կետի համաձայն, նշված ժամկետներում, համապատասխան փաստաթղթերը ներկայացվում են ԲՈԿ՝ Գիտական կոչում շնորհելու մասին որոշումը հաստատելու և համապատասխան դիպլոմով (վկայականով) ամրագրելու համար:

3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Սույն ընթացակարգը և վերջինիս մեջ փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Գիտական խորհրդի որոշմամբ:
3.2. Սույն ընթացակարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից: